ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ



ՀՈՒՆՎԱՐ – ՍԵՊՏԵՄԲԵՐ 2012

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակաշրջանի համար ՀՆԱ աճը գնահատվում է 7.1% շրջակայքում:

2005թ. սկսած ՀՆԱ կառուցվածքում նկատվում է ծառայությունների տեսակարար կշռի աճ:

Տարվա առաջին կիսամյակի ՀՆԱ կառուցվածքը գրեթե բնութագրում է ՀՆԱ տարեկան կառուցվածքը:

Թողարկման ծավալների աճերն ըստ ճյուղերի արտահայտում են ամբողջ տարվա համար ձևավորված միտումները:

Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական կորպոռացիայի կողմից հրապարակված «Գործարությամբ զբաղվելը 2013» զեկույցի համաձայն Հայաստանը բարելավել է իր դիրքը 23 կետով և ընդգրկվել է լավագույն 20% երկրների շարքում:

2012-2013թ. Գլոբալ մրցունակության զեցույցի համաձայն Հայաստանն «Անցումայինից» փոխադրվել է «Արդյունավետության վրա հիմնված» զարգացման փուլին:

Տնտեսական ակտիվության ցուցանիշը, %

	2010	2011	2012
Հունվար-սեպտեմբերը նախորդ տարվա նույն ժ/շ նկատմամբ	3.4	6.4	7.6
Սեպտեմբերը նախորդ տարվա սեպտեմբերի նկատմամբ	-5.1	9.0	4.4
Սեպտեմբերը նախորդ ամսվա նկատմամբ	17.6	17.0	14.0

Համախառն ներքին արդյունքի աճը, %



	2012 Q1	2012 Q2	2012 S1
ՀՆԱ աճը նախորդ տարվա նույն ժ/շ նկատմամբ, %	5.6	6.6	6.2

ՀՆԱ կառուցվածքը, %





Թողարկման ծավալի աճը նախորդ տարվա նույն ժ/շ նկատմամբ, %

	2007-9	2008-9	2009-9	2010-9	2011-9	2012-9
Արդյունաբերական արտադրանք	2.1	3.4	-11.4	10.9	13.0	11.6
Գյուղատնտեսական արտադրանք	8.3	4.2	-1.3	-17.9	15.3	10.5
Շինարարություն	18.3	12.1	-43.8	-5.2	-20.0	-2.0
Առևտրի շրջանառություն	8.6	10.1	-5.4	4.5	3.3	2.9
Ծառայություններ	17.0	14.5	-1.2	7.4	5.8	11.2

Գործարարությամբ զբաղվելը, ՀՀ դիրքը 185 երկրների շարքում

	2012	2013	Փոփոխությունը
Գործարարությամբ զբաղվելը	55	32	+23

Գլոբալ մրցունակության ինդեքսը, 2012-2013թթ

	Դիրքը 144 երկրների շարքում	Միավորը (1-7)	Փոփոխությունը	
			Դիրքը	Միավորը
Գլոբալ մրցունակության ինդեքս	82	4.0	+10	+0.1
Հիմնական պահանջներ	76	4.4	+18	+0.2
Արդյունավետության խթաններ	82	3.9	+9	+0.2
Նորարարության և կատարելագործող գործոններ	98	3.3	+12	+0.2

2. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Արդյունաբերության ճյուղի աճին, ինչպես և նախորդ ժամանակաշրջանում, առավելագույնը նպաստել է մշակող արդյունաբերությունը:

Մշակող արդյունաբերության մեջ առաջին 3 խոշոր ենթաճյուղերը կազմում են 75.3%-ը՝

Սննդամթերք
Հիմնային մետաղներ
Խմիչքներ

Մշակող արդյունաբերության աճին, ինչպես և առաջին կիսամյակում, առավելագույնը նպաստել է խմիչքների արտադրությունը:

ՀՀ արտահանման վրա հիմնված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության շրջանակներում արդեն իրականացման փուլում են գտնվում Դեղագործության և բիոտեխնոլոգիաների և Կոնյակագործության ոլորտային ռազմավարություններն ու գործողությունների ծրագրերը:

Արդյունաբերությունն ըստ արտադրության բաժինների

	Արտադրանքի ծավալը մլրդ. դրամ	Աճը 2011թ. նույն ժ/շ նկատմամբ, %	Կառուցվածքը, %	Նպաստման չափը, տոկոսային կետ
Արդյունաբերություն	796.4	11.6	100.0	-
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	143.4	15.7	18.0	2.8
Մշակող արդյունաբերություն	492.6	9.3	61.8	5.8
Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	147.8	13.5	18.6	2.5
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառ. և վերամշակում	12.6	34.6	1.6	0.5

Մշակողարդյունաբերությունընստգործունեությանհիմնականտեսակների

	Արտադրանքի ծավալը մլրդ. դրամ	Աճը 2011թ. նույն ժ/շ նկատմամբ, %	Կառուցվածքը, %	Նպաստման չափը, տոկոսային կետ
Սննդամթերքի արտադրություն	179.5	4.5	36.4	1.6
Հիմնային մետաղների արտադրություն	122.5	11.2	24.9	2.8
Խմիչքների արտադրություն	69.1	28.1	14.0	3.9
Այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	34.7	-0.7	7.0	0.0
Ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն	14.6	8.1	3.0	0.2
Ծխախոտային արտադրատեսակների արտադրություն	13.5	56.5	2.7	1.5
Ոսկերչական արտադրատեսակների արտադրություն	8.8	-12.5	1.8	-0.2
Պատրաստի մետաղե արտադր. արտադրություն	7.6	-4.0	1.5	-0.1
Այլ	42.2	-	8.6	-0.5

Աջակցությունն արդյունաբերական ընկերություններին



Իրացվել է արտադրված արդյունաբերական արտադրանքի 97.3%-ը, որի 39.5%-ն ուղղվել է արտահանմանը: Մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանումը կազմել է իրացման 42.2%-ը, նախորդ տարվա նույն ժ/շ համեմատ աճելով մոտ 3 տոկոսային կետով:

Թույլ է թողարկման մեջ ամենամեծ տեսակարար կշիռ նունեցող «սննդամթերքի արտադրություն» ենթաճյուղի արտահանման ուղղվածությունը՝ 5.4%:

Ամենամեծ արտահանման ուղղվածություն ունեն հիմնային մետաղների արտադրություն, խմիչքների արտադրություն և ծխախոտային արտադրատեսակների արտադրություն ենթաճյուղերը:

Արդյունաբերական արտադրանքի արտահանման 23.5%-ը բաժին է ընկնում ԱՊՀ երկրներին:

Հունվար-սեպտեմբերի ընթացքում աշխատանքի միջին արտադրողականությունն արդյունաբերությունում կազմել է 9.7 մլն դրամ:

Արդյունաբերական կազմակերպությունների ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության երկնիշ դասակարգման

	Արտադրանքի ծավալը, մլրդ դրամ	Պատրաստի արտադրանքի իրացումը, մլրդ դրամ	Արտահանումը, մլրդ դրամ	Արտահանումը իրացման նկատմամբ, %	Նպաստման չափը արդյունաբ. աճին, տոկոսային կետ
Արդյունաբերություն	796.4	775.1	305.9	39.5	-
Հանքագործական արդյունաբերություն և	143.4	127.3	79.5	62.5	2.8
Մետաղական հանքաքարի արդյունահանում	140.1	123.8	78.6	63.5	2.9
Հանքագործական արդյունաբ. և բացահանքերի շահ. այլ ճյուղեր	3.3	3.5	0.9	26.7	0.0
Մշակող արդյունաբերություն	492.6	487.4	205.7	42.2	5.8
Սննդամթերքի արտադրություն	179.5	165.6	8.9	5.4	1.0
Խմիչքների արտադրություն	69.1	70.7	46.3	65.6	2.4
Ծխախոտային արտադրատեսակների արտադրություն	13.5	15.0	9.2	61.7	1.0
Հագուստի արտադրություն	3.8	3.8	1.4	37.2	0.0
Թղթի և թղթե արտադրատեսակների արտադրություն	5.1	5.2	0.1	2.4	0.2
Պոլիգրաֆիական գործունեություն, գրառված կրիչների բազմացում	6.9	7.0	0.1	1.4	0.0
Քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադր.	5.5	5.5	1.1	20.1	-0.1
Ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն	14.6	16.0	1.9	11.9	0.1
Այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների	34.7	35.3	6.7	18.9	0.0
Հիմնային մետաղների արտադր.	122.5	127.4	114.7	90.1	1.7
Պատրաստի մետաղական արտադրատեսակների արտադր.	7.6	8.0	0.7	9.2	0.0
Համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարք. արտադր.	3.8	3.8	1.9	50.5	0.0
Էլեկտրական սարքավորանքի արտադրություն	3.9	3.9	2.1	54.2	0.0
Մշակող արդյունաբ. այլ ճյուղեր	21.9	20.4	10.4	51.1	-0.4
Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	147.8	147.8	20.7	14.0	2.5
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառ. և վերամշակում	12.6	12.6	-	-	0.6

Աշխատանքի արտադրողականությունը (հունվար-սեպտեմբեր) և օտարերկրյա ուղղակի ներդրումները (հունվար-հունիս) արդյունաբերության բաժիններով



3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆինանսական և ապահովագրական գործունեությունը շարունակում է մնալ առաջատարը ծառայությունների կառուցվածքում:

Ծառայությունների մատուցումը շարունակում է կենտրոնացված լինել Երևանում՝ 86.5%:

Հաշվետու ժամանակահատվածում մեկնողները գերազանցել են ժամանողներին 5.1 հազար մարդով:

ՏՀՏ ոլորտի աճը շարունակում է ապահովվել առևտրի և ծառայությունների հաշվին:

Տարվա բոլոր եռամսյակներում ՏՀՏ ոլորտի արտադրությունը շարունակաբար նվազել է:

Համաշխարհային բանկի կողմից հաշվարկվող գիտելիքահենք տնտեսության ինդեքսով Հայաստանը զբաղեցրել է 71-րդ տեղը 146 երկրների շարքում, 39-րդ տեղը Եվրոպայի և կենտրոնական Ասիայի (46 երկիր) և 5-րդ տեղը միջին և ցածր եկամուտներով (42 երկիր) երկրների շարքում:

Ծառայությունների կառուցվածքը, %



Միջազգային զբոսաշրջությունը

	2007-9	2008-9	2009-9	2010-9	2011-9	2012-9
Ժամանողների թվաքանակ, հազ. մարդ	370.7	399.7	422.1	487.9	551.6	603.1
Աճը նախորդ տարվա նույն ժ/շ նկատմամբ, %	33.8	7.8	5.6	15.6	13.1	9.4
Մեկնողների թվաքանակ, հազ. մարդ	364.6	391.7	398.1	474.6	546.2	608.2
Աճը նախորդ տարվա նույն ժ/շ նկատմամբ, %	38.8	7.4	1.6	19.2	15.1	11.4

ՏՀՏ ոլորտը, ծավալը մլրդ դրամ/աճը նախորդ տարվա նույն ժ/շ նկատմամբ

	2009 - 9		2010 - 9		2011 - 9		2012 - 9	
ՏՀՏ, այդ թվում	141.6	3.5	141.5	4.0	141.0	0.3	155.5	4.6
արտադրություն	2.0	-41.9	1.2	26.3	1.3	7.1	1.4	-12.2
առևտուր	6.4	-11.4	6.4	81.4	12.9	25.6	14.2	8.7
ծառայություններ, որից՝	133.2	5.4	133.8	1.9	126.8	-1.6	139.9	4.4
հեռահաղորդակցություն	119.6	6.5	119.5	1.0	118.1	-1.5	122.9	2.6

Հայաստանը Գիտելիքահենք տնտեսության ինդեքսում

	2012		Փոփոխությունը 2000թ. նկատմամբ	
	Դիրքը	Միավորը	Դիրքը	Միավորը
Գիտելիքահենք տնտեսության ինդեքս	71	5.08	-13	-0.49
Գիտելիքահենք ինդեքս	78	4.84	-20	-0.91
Տնտեսական և ինստիտուցիոնալ ռեժիմ	57	5.8	+11	+0.77
Նորարարություն	82	4.21	-28	-1.71
Կրթություն	39	6.96	-	-0.11
ՏՀՏ	101	3.35	-11	-0.90

4. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Պահպանվել է ներմուծման նկատմամբ արտահանման առաջանցիկ աճը:

Արտահանման և ներմուծման տեմպերի դանդաղումը հիմնականում պայմանավորված է «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի ծավալների կրճատմամբ:

Արտահանման առուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռ ունի հանքահումքային արտադրանքը (28.2%), որը 2007թ. համեմատ ավելացել է 13.3 տոկոսային կետով:

Արտահանման գծով հիմնական առևտրային գործընկեր են ՌԴ, Գերմանիան, Բուլղարիան, Բելգիան և Իրանը, որոնց բաժին է ընկնում արտահանման մոտ 56%:

Արտաքին առևտրի ծավալ, մլն ԱՄՆ դոլար

	2007-9	2008-9	2009-9	2010-9	2011-9	2012-9
Արտահանում	828.9	822.0	490.0	726.2	973.3	1032.0
Ներմուծում	2186.5	3122.3	2247.2	2659.8	2974.6	3009.6
Առևտրաշրջանառություն	3015.4	3944.3	2737.3	3386.0	3947.9	4041.6
Առևտրի հաշվեկշիռ	-1357.6	-2300.3	-1757.2	-1933.6	-2001.3	-1977.6

Աճը նախորդ տարվա նույն ժ/շ նկատմամբ, %

	2007-9	2008-9	2009-9	2010-9	2011-9	2012-9
Արտահանում	22.8	-0.8	-40.4	48.2	34.0	6.0
Ներմուծում	45.7	42.8	-28.0	18.4	11.8	1.2
Առևտրաշրջանառություն	38.6	30.8	-30.6	23.7	16.6	2.4

Արտահանման կառուցվածքը, %



Ներմուծման կառուցվածքը, %



Արտահանման կառուցվածքն ըստ երկրների, %



5. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

Օտարերկրյա, ինչպես նաև օրարերկրյա ուղղակի ներդրումների ծավալները նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել են 40 և 60 տոկոսով համապատասխանաբար:

Նախորդ տարիների նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել է նաև օտարերկրյա ներդրումներ/ՀՆԱ ցուցանիշը:

Ըստ գործունեության տեսակների օտարերկրյա ներդրումների հոսքերում գերակշռում են մետաղական հանքերի արդյունահանման, իսկ օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքերում հեռահաղորդակցության ոլորտում կատարվածները:

2013թ. «Գործարարությամբ զբաղվելը» ինդեքսի համաձայն Հայաստանն առավելագույն առաջընթաց է արձանագրել ներդրողների պաշտպանության բնագավառում՝ աճելով 72 կետով և այժմ զբաղեցնելով 25-րդ տեղը:

Ներդրումների դինամիկան, հունվար-հունիս

	2007 S1	2008 S1	2009 S1	2010 S1	2011 S1	2012 S1
Համախառն կուտակում, մլրդ դրամ	311.4	394.5	276.3	323.7	334.8	252.9
Օտարերկրյա ներդրումներ, մլն դոլար	312.2	515.1	312.2	327.5	438.8	266.1
այդ թվում՝ ուղղակի, մլն դոլար	214.0	352.7	246.4	220.3	366.4	147.5
Օտարերկրյա ներդրումներ/ՀՆԱ, %	10.1	12.2	9.4	9.8	11.4	6.8

Օտարերկրյա ներդրումներն ըստ գործունեության տեսակների և երկրների, 2012 հունվար-հունիս, %





Օտարերկրյա ուղղակի ներդրումներն ըստ գործունեության տեսակների և երկրների, 2012 հունվար-հունիս, %





Օտարերկրյա ուղղակի ներդրումներն ըստ գործունեության տեսակների , հունվար-հունիս, մլն ԱՄՆ դոլար

	2007 S1	2008 S1	2009 S1	2010 S1	2011 S1	2012 S1
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	3.6	12.0	2.8	14.6	21.4	39.6
Մշակող արդյունաբերություն	13.6	11.7	12.7	5.9	157.4	9.9
Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	1.9	221.8	37.5	55.9	34.5	11.3
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառ. և վերամշակում	0.4	-	1.9	-	1.5	-
Գյուղատնտեսություն, որսորդություն և հարակից ծառայություններ	-	-	4.2	2.8	1.2	4.7
Շինարարություն	12.5	0.0	24.6	1.5	0.8	0.6
Առևտուր	5.4	0.6	2.7	3.2	7.5	0.7
Ծառայություններ	115.1	106.8	161.3	136.3	125.1	80.5

6. ԳՆԵՐ ԵՎ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

Սպառողական գների ինդեքսը պահպանվում է թիրախավորված միջակայքում:

Ի տարբերություն նախորդ տարիների հաշվետու ժամանակաշրջանում ոչ պարենային ապրանքների գների աճի տեմպն ավելի բարձր է եղել, քան պարենային ապրանքներինը:

2012թ. ինն ամիսներին աճել է ոչ միայն անվանական, այլև իրական միջին ամսական աշխատավարձը:

Նվազագույն աշխատավարձը գերազանցում է նվազագույն պարենային զամբյուղը, սակայն շարունակում է փոքր մնալ նվազագույն սպառողական զամբյուղից:

Սպառողական գների ինդեքսը, նախորդ տարվա նույն ժ/շ նկատմամբ, %

	2007-9	2008-9	2009-9	2010-9	2011-9	2012-9
Սպառողական գների ինդեքս	103.8	109.7	102.9	107.8	108.5	102.3
Պարենային ապրանքների գների ինդեքս	104.8	111.5	99.1	107.0	112.8	101.9
Ոչ պարենային ապրանքների գների ինդեքս	99.0	105.7	102.6	111.1	103.1	104.2
Ծառայությունների գների ինդեքս	104.5	108.4	110.2	107.5	104.0	102.1

Գների ինդեքսներն ըստ տնտեսության հատվածների, նախորդ տարվա նույն ժ/շ նկատմամբ, %

	2007-9	2008-9	2009-9	2010-9	2011-9	2012-9
Արդյունաբերողների արտ. գների ինդեքս	100.3	106.0	100.8	125.9	110.9	105.7
Արտահանման միջին գների ինդեքս	-	102.5	83.5	123.9	113.0	98.1
Ներմուծման միջին գների ինդեքս	-	108.4	115.9	102.0	109.2	108.4

Միջին ամսական աշխատավարձը, հազար դրամ



Աշխատավարձը, նվազագույն սպառողական և պարենային զամբյուղները տվյալ ժ/շ ընթացիկ գներով, հազար դրամ